

Վ. Ռ. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ. Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն. գիրք 1-ին և 2-րդ, Երևան 1968 և 1985 թթ.:

Ռուս և հայ ժողովուրդների միջև տնտեսա-վայն, մշակութային և քաղաքական հարաբերությունների հաստատման ու զարգացման գործում մեծ էր Ռուսաստանի տարածքում Կասպից, Սև և Այովի ծովերի, ինչպես նաև մեծ գետերի՝ Վոլգայի, Դնեպրի, Դոնի ափերին և այլուր ձևավորված ալանյան մեծ հայկական գաղթախոնների դերը, ինչպիսիք էին Կիբի, Ղրիմի, Աստրախանի, Մոսկովյի, Պետերբուրգի և Նոր Նախիջևանի հայկական գաղութները:

Վ. Բ. Բարխուդարյանի հատուկ ուսումնասիրության առարկան է եղել Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմությունը 20-ամյա քրդական աշխատանքի ընթացքում նա ստեղծել է ևրկատոր արժեքավոր մի մենագրություն, որտեղ հանգամանորեն ներկայացված է Նոր Նախիջևանի գաղթախոնի ձևավորման ողջ ընթացքը, նրա Կարգացումն ու բարդավաճումը, կապը մայր հայրենիքի և մյուս հայկական գաղթախոնների, ինչպես նաև երկրամասի ռուսական քաղաքների ու գյուղերի և, ընդհանրապես, Ռուսաստանի հետ:

1768—1774 թթ. ռուս-թուրքական պատերազմի հաջող ավարտից և Փյուլուկ-Կայնարչիի հաշտության կնքումից հետո ռազականալարի ամրապնդում է Ռուսաստանի հարավային սահմանների անվտանգությունը: Անմարդաբնակ այդ երկրամասը ապրում է իր վերածնունդը: Ռուսական արքունիքը ոչ միայն Ղրիմից հույն և հայ բնակչության գաղթ է կազմակերպում, այլև բարենպաստ պայմաններ է ստեղծում պետության հարավային շրջանների բնակեցման և զարգացման համար: Եկատերինա II-ի 1779 թ. նոյեմբերի 14-ի հրամանագրով գաղթականներին տրվում են տնտեսական կարևոր իրավունքներ ու արտոնություններ: Հայ գյուղացիները ստանում են մեծ հողաբաժիններ և, ինչպես քաղաքացիները, տասը տարով ազատվում ամեն տեսակի հարկերից: Նախիջևան քաղաքում, որը հիմնադրվել էր 1779 թ., ստեղծվում է հայկական մագիստրատ՝ ազգային ավանդույթներով ու հայերեն լեզվով դատավարություն վարելու իրավասությամբ և այլն:

Ռուսամասիրողը հեղինակավոր աղբյուրների բազմաթիվ փաստաթղթեր է բերում, որոնք խոսում են գաղութի տնտեսական և մշակութային մակարդակի սրընթաց վերելքի մասին: Հետաքրքրական են 1812 թ. Նոր Նախիջևանում պտնվող գնեթրալի. Ա. Բեդրոդկոյի (1756—1815) հիշողությունները: Քաղաքը բազմամարդ էր, — գրում է նա, — փողոցները տեղաբաշխված

են համալարի կառույցներն ունեն հայկական ոճավորում: Տները մաքուր են, հիմնականում կղմինդրի տանիքներով: Կան նաև քարաշեն լավ տներ: Մի քանի քարաշեն բազմական մեծ եկեղեցիներ կան: Շատ այգիներ կան: Քաղաքի դիրքը հրաշալի է՝ Դոն գետի ափին, լեռան վրա (գ. 1, էջ 475):

Ակադեմիկոս Ա. Դեմիդովը, որը 1837 թ. գտնվում էր Ռուսաստանի հարավում, գրում էր, որ դա «հրաշալի քաղաք է», որը «մեծ հաճությամբ է պատճառում: Ե՛վ իր տնտեսական ու մշակութային դերով, և՛ իր առևտրով ու շինարարությամբ, և՛ իր բարեկարգ վիճակով Նոր Նախիջևանը համարվում էր Նովոռոսիայի երկրամասի առաջին քաղաքներից մեկը:

Պրոֆեսոր Վ. Բ. Բարխուդարյանը, լիովին գիտակցելով թեմայի բարդությունն ու արդիականությունը, դեռ 1950-ական թթ. մեծ պատասխանավությամբ սկսեց դրա ուսումնասիրությունը: Գրքում՝ օգտագործված են Մոսկովյի (ЦГАДА, ЦГВИА, АВПр, ЦГАОР, АН СССР), Լենինգրադի (ЦГИАЛ), Ռոստովի, Նրևանի (ՀԿՊԿԱ, Մաշտոցի անվան Մատենադարանի արխիվային ու ձեռագրային ֆոնդերը) արխիվների բազմաթիվ ֆոնդերում պահվող մեծ քանակությամբ լուսագրերով և փաստաթղթեր, ուսումնասիրված են հրատարակված սկզբնաղբյուրներ, հարուստ գրականություն և պարբերական մամուլ:

Առաջին հատորի առաջին գլուխներում լուսաբանվում են Ղրիմի հայերի վերաբնակեցման կազմակերպման և հինգ հայկական գյուղերի ու Նոր Նախիջևան քաղաքի հիմնադրման հետ կապված հարցերը, դրանց ներքին կյանքը, ինքնավար մարմինների ստեղծումը և այլն: Հեղինակը ցույց է տալիս ռուսական կառավարության կողմից կազմակերպված այդ վերաբնակեցման դրական նշանակությունը, առանց չափազանցնելու և գերազանցատելու պետության քաղաքականությունն ու ազգային փոքրամասնությունների վիճակը: Նա անդրադառնում է գաղթի հետ կապված դժվարություններին և ժողովրդի դժգոհությանը, առևտրական խավերի միջև գոյություն ունեցող հակասություններն ու մրցակցությանը, Ռուսաստանի հարավային քաղաքների իշխանությունների ձգտմանը՝ սահմանափակել հայերի ինքնավարությունն ու իրավունքները: Վերլուծելով այդ հակասությունների պատճառներն ու դրանց հաղթահարման փորձերը, հեղինակը ցույց է տալիս նաև վերաբնակեցման ձեռնադրությունը ինչպես Ռուսաստանի, այնպես էլ հայ զանգվածների հա-

մար: Դա առաջին մասնայական կամավոր դադարն էր. որը չայերին փրկեց թուրք-թաթարական բռնակալական լծից: Այն կազմակերպվել էր Ա. Վ. Սոփորովի կողմից. որը հոգում էր զաղթականների բարձրության մասին:

3—5-րդ գլուխներում շարադրված են հողագործության, անասնապահության, արհեստների և արդյունաբերության, ներքին և արտաքին առևտրի զարգացման հետ կապված հարցերը (այս ամենը զարգացման 30 տարիների ընթացքում) կապիտալիստական հարաբերությունների զարգացման ժամանակաշրջանում:

Փաստական հարուստ նյութի հիման վրա հեղինակը տալիս է Նոր Նախիջևանի կյանքի գունագեղ ու աշխույժ պատկերը, քննում բնակչության սոցիալական կազմի հետ կապված խնդիրները, անդրազատնում առևտրաարդյունաբերական և ագրարային հարաբերությունների բնույթին: Ակնհայտ կերպով ցույց են տրվում հայերի գյուղացիական ազատ տնտեսությունների առավելությունները Ռուսաստանի հորտատի-րական և պետական-գյուղացիական տնտեսությունների համեմատությամբ. եթե կալվածատիրական գյուղացիները մեկ ցանքսի դիմաց ստանում էին չորս անգամ ավել բերք, իսկ պետական գյուղացիները՝ մեկ ցանքսից 6 անգամ ավելի, ապա Նոր Նախիջևանի գյուղերի գյուղացիները մեկ ցանքսից ստանում էին 8 անգամ ավելի բերք: Արագ զարգանում էին այգեգործությունը, շերամապահությունը, խաղողագործությունը: Վերջինս Նովոռոսիայի երկրամաս է ներմուծվել հայերի կողմից: Նախիջևանում կազմակերպված համաքարտություններում, որոնք ինչ-որ չափով Անդրկովկասի հայկական միջնադարյան համաքարտությունների շարունակությունն էին, իրենց ճաղկումն էին ապրում ավելի քան 40 տեսակի արհեստներ: Դրա հետ միասին հեղինակը ցույց է տալիս Նոր Նախիջևանի համաքարային կազմակերպությունների յուրահատկությունները զարգացման նոր պայմաններում:

Դրո՞ւմ հետաքրքրական տվյալներ են բերվում գյուղատնտեսության ու արդյունաբերության բարգավաճման, նրանց եկամուտների մեծացման մասին: Հեղինակը յուրաքանչյուր հրովարտակ (погоженіе) լուսարանում է համոզիչ փաստարկներով, սկզբնաղբյուրների վկայություններով, աղյուսակներով, որոնք կազմված են արխիվային և վիճակագրական նյութի տվյալների հիման վրա (տե՛ս գ. 1, էջ 48, 49, 58, 101, 122, 123, 154 և այլն): Նա համոզված է, որ այս երկրամասում հաղթարվող հայ բնտանիքները գտել են կյանքի բարենպաստ պայմաններ և կարողացել են զարգացնել իրենց տնտեսությունն ու մշակույթը:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում հ. Դոգլուխը՝ Վոր Նախիջևանի զաղութը Վախտանգյան հառաչական կյանքի ոլորտում: Այստեղ հայկական զաղութը ակնհայտ և համոզիչ 30-վցույց է տրվում որպես առաջադեմության անքակտելի մասնիկ. որը մինևույն ժամանակ անխզելիորեն կապված էր մայր Հայաստանի հետ Նախիջևանցիները ամեն կերպ օգնում էին ռուսական պետությանը՝ Թուրքիայի և Նապոլեոնյան բանակների դեմ նրա բարձրարում: 1806 թ. Նախիջևանցիները 11 հազար ռուսաց հանգանակություն կազմակերպեցին. ինչպես նաև 150 պարկ պարեն և 243 հրացան հավաքեցին ռուսական բանակին օգնություն ցույց տալու համար: Նոր Նապոլեոնը ներխուժեց Ռուսաստան, հայերը քաղաքում սուգ հայտարարեցին և բանակի օգնության համար հավաքեցին 30 հազար ռուսի (գ. 1, էջ 312—314): Հայերը ակտիվորեն մասնակցում էին 1853—1856 թթ. Ղրիմի պատերազմին: Նրանք զորքին ուղարկեցին 10500 փութ պաքսիմատ, տասնյակ հազարավոր փութ ածուխ (նավատորմի համար) և 30000 ռուսի կանխիկ դրամ: Միայն Սևաստոպոլի վերավորների համար հավաքվեց 5000 ռուսի, իսկ տուժած քաղաքացիներին տրամադրվեց 4594 ռուսի զուսմար:

Նոր Նախիջևանի քաղաքական ու մշակութային կյանքի պատմությունը շարունակելուց առաջ մենազրույթյան հեղինակը հանգամանորեն ուսումնասիրում է բնակչության սոցիալ-տնտեսական և իրավական դրության փոփոխությունները. զաղլուխի ինքնուրույնության վերացումն ու համառուսաստանյան բնահանուր վարչաիրավական կարգին անցնելը, հայկական մագիստրատի լուծարի ենթարկվելը, շնայած նրան, որ Դոնի հայկական բնակչությունը երկար ժամանակ շարունակում էր ապրել ավանդական հասարակական կյանքով: Իրավական և տնտեսական փոփոխությունները հայկական զաղութին իր ինքնատիպությունը պահպանեց նույնիսկ 1870 թ. քաղաքային ռեֆորմից հետո, երբ Նոր Նախիջևանում ստեղծվեց Դոնի հայկական բնակչության ինքնավարություն փաստական որդանը: Նման իրավական և տնտեսական դրությունը չէր կարող չնդգաստել բնակչության աճին և բարձրության վերելքին. այսպես, 1868—1914 թթ. բնվաքցում Նոր Նախիջևանի հայերի թիվը եռապատկվեց և 15231-ից հասավ 49523 մարդու: Համարյա եռապատկվեց նաև հայկական գյուղերի բնակչությունը: Դրան նպաստում էր երկաթուղու կառուցումը, րավականաչափ խոշոր հողարամիքների պահպանումը, որոնք դեռևս 2—3 անգամով զերազանցում էին նարեան ռուսական նահանգների հողարամիքների միջին չափերին: Տնտեսության բարձր մակարդակի պահպանմանը նպաստում էին արդավանդ և լավ

մշակված հողերի բարձր բերքատվությունը, այդեղործության, բանջարաբուծության և անասնապահության զարգացումը: խոշոր եղջերավոր անասունների և ձիերի գլխաքանակը հասնում էր ավելի քան 10000, իսկ մանր եղջերավորներինը՝ 100000-ի:

Հետևաբար մամանակաշրջանում հաջողությամբ զարգանում էր արդյունաբերությունը՝ կաշեգործական, աղուսաշինական և ծխախոտադործական արտադրությունը: Գործում էին 10 հարյուր հազար ձեռքով մշակվում էր ավելի քան 300 000 գլուխ մանր եղջերավոր անասուն: 1903 թ. նոր նախընտանում գործում էին 64 ձեռնարկություններ, որոնցից ամենաշատ արտադրանքը տախի էին բրդամշակման 5 գործարանները: Ինչպես նշում է հեղինակը, «հետևաբար մյուս տարիների ընթացքում համախառն արտադրանքը մեծացավ 5,5 անգամ» (դ. 2, էջ 365):

Արտադրության զարգացման հիմքի վրա ընդլայնվում էր նաև առևտուրը, մասնավորապես յուրի և հացահատիկի, որոնք հայ վաճառականները արտահանում էին Ֆրանսիա, Անգլիա, Իտալիա:

Գրքում ցույց է տրված հայ երիտասարդության մասնակցությունը հեղափոխական նարդեհիկներին ծավալվող շարժումներին: Սոցիալական ու ազգային ճնշման դեմ միասնական պայքարի ավանդույթը պահպանվում և զարգանում է XIX դարի վերջին և XX դարի սկզբին, երբ ինքնակալության ոռակցիոն քաղաքականությունը առավել դժգոհության է հասնում: Հայկական եկեղեցու ունեցվածքի բռնագրավման մասին 1903 թ. հունիսի 12-ի օրենքը, որը նշանակում էր հայկական դպրոցների նյութական բազայի և հայկական գաղութի նյութական պայմանների վատթարացում, առաջացնում է լուրջ դժգոհություններ, սկսվում է հայերի դիմադրությունը: 1905—1907 թթ. հեղափոխության տարիներին Ռուստովում և նոր նախընտանում սկսվում է գործադուլային շարժում, իսկ ղեկավարներին Ռուստովում ժայր է առնում դիմված ապստամբություն: Երիտասարդական շարժման կենտրոն է դառնում հայկական թեմական դպրոցը: Հեղափոխական նոր վերելքի տարիներին է ստեղծվում ՌՍԴԲԿ ռուստով-նախիչևանյան կոմիտեն, իսկ 1914 թ.՝ ՌՍԴԲԿ ղեկավար կոլեկտիվը:

Վ. Բ. Բարխուդարյանը նշում է. «Դրանի աշխատավորությունը ռեզոլուցիայի ընդունեց Հոկտեմբերյան մեծ հեղափոխության լուրը, սակայն հակահեղափոխությունը համառոտեց դիմադրում էր Դոնում սովետական իշխանության հաստատմանը: 1920 թ. առաջին կեսին, դժվար ու տևական պայքարից հետո, հակահեղափոխությունը խորտակվեց և սովետական իշխանությունը

վերջնականապես հաստատվեց երկրամասում» (դ. 2, էջ 370):

Գրքում նշանակալից տեղ է գրավում մշակույթին, կրթությանը և դպրոցներին, պարբերական մամուլին, գրականությանը, արվեստի զարգացմանը, Ռուսաստանի և Հայաստանի մշակութային կյանքի հետ գաղութի կապերին նվիրված գլուխը: Բավական է թվարկել ամսագրերի ու թերթերի անունները, պատկերացում կազմելու համար հայրենիքից կարծես հեռու ընկած հայ ժողովրդի այդ մասնիկի զարմանալի զարգացման մասին՝ «Լույս», «Գրիչ», «Գաղութ», ռուսերեն՝ «Прна-завский край», «Донская речь» և այլն:

Գրքի հեղինակը անդրադառնում է նոր նախընտանի հայկական գաղթաբնակների ու միայն ռուսական միջավայրի, այլև մայր հայրենիքի և հայկական այլ գաղթաբնակների հետ, լուսաբանելով այդ կարևոր կենտրոնի դերը հայ ժողովրդի հասարակական-քաղաքական և մշակութային կյանքի բոլոր ասպարեզներում և նրա ավելի քան 200-ամյա ազատագրական պայքարում:

Նոր նախընտանում հասակ են առել հայ առաջադեմ մտավորականության ականավոր ներկայացուցիչներից շատերը: Բավական է հիշել Պատկանյանների ընտանիքը, նշանավոր բանաստեղծ և հրապարակախոս Ռաֆայել Պատկանյանին, հեղափոխական-դեմոկրատ Միքայել Նալբանդյանին, հետագայում Լենինի զինակից Ալեքսանդր Մյասնիկյանին, բոլշևիկ Լուկաշինին (Ս. Սրապիոնյան), ՍՍՀՄ ժողովրդական նկարիչ Մարտիրոս Սարյանին, բանաստեղծուհի Շուշանիկ Կուրդինյանին, գրող և հրապարակախոս Մարիետա Շահինյանին և այլոց, որոնք ծնվել կամ պարել են հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամության այդ հրաշալի օջախում և որպես ականավոր գործիչներ ձևավորվել են Ռուսաստանի հեղափոխական միջավայրի և դեմոկրատական մշակույթի բարերար ազդեցության տակ:

Գաղութի պատմությունն ընդգրկում է շուրջ 200-ամյա ժամանակաշրջան՝ գաղութի հիմնադրումից, նոր հայրենիքի կյանքին նրա ցույց տված մասնակցությունից նապոլեոնյան արշավանքներին, 1853—1856 թթ. Արևելյան և 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմներին, առաջին համաշխարհային պատերազմի (1914—1918), քաղաքացիական կռիվների տարիներին մինչև սովետական կարգերի հաստատումը Աղովյան և Սեծովյան երկրամասերում:

«Նոր նախընտանի հայկական գաղութի պատմությունը» գրված է հարուստ փաստագրական նյութի վրա: Այնտեղ քննադատաբար օգտագործված և ըստ արժանիության գնահատված են այն աշխատությունները, որոնք այս կամ այն չափով

վերաբերում է նաև տվյալ թնամայի և հարակից խրե-
դիրներ, քառամասերություններ:

Վ. Բ. Հարթուզարյանը, իստիստիկ պատճա-
րով, չի առնչադարձել խոշոր մասնագետների, գիտ-
նական էներգիաների, գրականագետների ու արվեստա-
գետների հետքին ու գործունեությանը, քանի
որ նրանք չեն ևս համապատասխան մասնագետ-
ների ուսումնասիրության օբյեկտներ և քառ մա-
նեթ ևս ընթացող իստարակայություններ: Քննվող
մեկագրությունն ակնհայտ արժանիքի էլ չենց այն
է, որ գրվում էր քառամասով ևս անհավան-
ական ու քառագրական-մշակութային այն

պայմանները, ոչ ոչ ոչ ոչ ձևավորվում, հաստի ևս
առնում են Նախնիքներում ծնված ու իրենց կյան-
քին ու գործը այնպիսի պայմաններում մեր բազմաթիվ
այն մեծերը:

Կարծում ենք, որ չնոր Նախնիքների այն-
պիսի գաղութի պատմությունը, հշտնակալի
ներգրում է այդ մեծ հայաքաղաքի և հայ-առա-
կան գաղութի կապերի ու բարեկամության պատ-
մության ուսումնասիրման մեջ:

Վ. Կ. ՈՍԿԱՆՆԻՍ

Э. Г. ТУМАНЯН. Язык как система социолингвистических систем.
Синхронно-диахроническое исследование. М., Наука, 1985.

Լեզվաբանության պատմության մեջ XX դարի
60—70-ական թթ. էր, որ ձևավորվեց հանրա-
լեզվաբանությունը: Լեզվաբանության, սոցիոլո-
գիայի և մասամբ ազգագրության հատման կե-
տում առաջացած այս նոր գիտությունը նախա-
պես դարձանում էր անգլիստիստ ևրկրներում,
բայց է համեմատաբար կարճ ժամանակամիջո-
ցում տարածվեց աշխարհում: Լեզվաբանության
այդ երկրաբանական ընդգծումը, իրենք, անելիքներ
ունեն. նրան վիճակված էր վեր հանել և լուծել
տեսական և կիրառական բազմաթիվ հարցեր:

Առավել մեծ շահով վերաբերում է ՍՍՀՄ-ին:
Ձեռնարկ Նախնիքների պատմության ոլորտին վերա-
բերող առարկան հարցեր սովետական լեզվաբան-
ների կողմից (Վիկտորյանով, Ժիրմունսկի, Գուս-
ման, Շչեդրա, Պոստրեյնյա, Արեզյան, Գ. Սևակ և
որոշներ) արժանիքներ են դնում նախքան լեզվա-
բանության այս բնագավառի ասպարիզ դալը, այ-
նուամենայնիվ սովետական հանրալեզվաբանա-
կան դպրոցի մոտեցող պետք է թվագրել 1970-
ական թթ. կեսերով, երբ մեկը մյուսի հետևից
հրատարակվեցին Վ. Ա. Ավրոբինի, Յու. Գ. Գե-
շերինի, Լ. Բ. Նիկոլայու, Ա. Դ. Շվեյցերի մե-
նագրությունները, ինչպես և այլ հետազոտողների
բազմաթիվ աշխատանքներ:

Մեզանում հանրալեզվաբանությանը առաջին
զբաղվողներից է նաև գրախոսվող աշխատության
հեղինակը: Եթե թույլանալի հանրալեզվաբա-
նական ուսումնասիրությունները ևս սկսվել են
1970-ական թթ. և, այս առումով, ներկա աշխա-
տանքը պետք է համարել երկար սպասված, թեև
ոչ երբևէ ուշացած, քանի որ հեղինակի այս
ուսումնասիրությունը բազմաթիվ արդիական
հարցադրումներով, թարմությամբ միանգամայն
նոր խոսք և որակ է հանրալեզվաբանության առ-
պարնդում:

Աշխատության հիմնական (և թե ոչ ամենա-
հիմնական) գաղափարներից մեկը պարզ է գտա-
նում արդեն վերնագրից՝ «Լեզուն որպես հանրա-
լեզվաբանական համակարգերի համակարգը»: Հա-
մաժողովրդական լեզուն գիտելով որպես հան-
րալեզվաբանական ընդհանուր համակարգ (սը-
ստեմա), հեղինակը քննում է նրա բաղա-
ցուցիչ մասերից յուրաքանչյուրը, առաջին
առաջացման հանգամանքները, գործառույթյան
ոլորտները, զարգացման միասունները: Ազգային
(էթնիկ) լեզուն գիտելով որպես գոյաձևերի հա-
մակարգ (գրական լեզու, բարբառներ և այլն),
հեղինակը ցույց է տալիս, որ գոյաձևերից յու-
րաքանչյուրը ևս մի բարդ համակարգ է: Այսպես
որինակ, իրեն ազգային լեզվի գոյաձևերից մեկը
հանգիստ և կող գրական լեզուն իր հերթին պետք է
գիտվի որպես տարրեր ուժերի (զեղարքիստա-
կան, պաշտոնական-գործառական, գիտատեխնի-
կական, հրապարակախոսական և այլն) համա-
կարգ: Զարգացնելով նշանավոր լեզվաբան
Ռ. Ավանեսովի միտքն այն մասին, որ ընդհանուր
լեզվական համակարգն իր մեջ պարունակում է
ավելի փոքր համակարգեր, է. Թումանյանը
բազմակողմանիորեն քննում է լեզվի գոյաձևե-
րի համակարգային կապերը: Լեզվի գոյաձևեր հա-
մարելով գերազույն համակարգի կառուցման
միավոր, հեղինակն իրավացիորեն նշում է, որ
լեզվի առանձին գոյաձևերի միջև անանցանելի
սահման գոյություն չունի, քանի որ նրանց ներ-
կառուցվածքային յուրահատկություններն ունեն
փոխներթափանցման ունակություն:

Գրախոսվող աշխատության ամենահաջողված
կողմերից մեկը պետք է համարել գրքի կառուց-
վածքային սկզբունքը: Թեևս, առաջին անգամ
է. Թումանյանն է, որ լեզվի և նրա կազմի մեջ
մտնող գոյաձևերի հարցը լայն ծավալով քնն-